

կամքը գիտակցութեան համար յատկապէս աղբիւր չէ: սորա (գիտակցութեան) համար հարկաւոր է դարձեալ առարկայ, որ զգայական տպաւորութեան գործունէութեամբ է առաջանում: Արովհետեւ զգայական գիտակցութիւնը մութ է, ուրեմն նորա մթութիւնը կարելի է միմիայն բանական գիտակցութեան գործունէութեամբ հեռացնել, որի մէջ հոգին արդէն ինքնագործող է երևում: Գիտակցութիւնը գործնական և բարոյական կեանքի համար նպատակ չէ, այլ միմիայն միջոց է: Կամքը բանականութիւնից բարձր է կանգնած, նորան են պատկանում (վերաբերում) թէ գովասանք և թէ կշտամբանք, թէ ծառայութիւնք և թէ յանցանք, և ո՛չ թէ բանականութեանը: Մեզքը մոլորութեան հետեանքը չէ, այլ նորա պատճառը, առանց ազատութեան կամքի չկայ ո՛չ պատասխանատուութիւն, ո՛չ յանցանք և ո՛չ էլ մեզք: Բայց որովհետեւ կամքն անկարելի է առանց մեր ցանկացածի գիտենալու, ուրեմն Գ ու Ն ս — Ս կ ո տ ն որոշումէ կամքից առաջ եղած գիտակցութիւնն (առաջին միտքը) այն գիտակցութիւնից, որ հետևումէ կամքից յետոյ (երկրորդ միտք), «Առաջին միտքը», որ ակամայ է առաջանում՝ մեր կամքի համար իբրև մի նշան է ծառայում: «Երկրորդ միտքը» առաջանումէ առաջին մտքից նորա վերայ կամքի ներգործութեամբ, և այս երկրորդ մտքին, որքան էլ որ նա կամաւոր է, յարմարին է, ինչպէս և կամքին, բարոյական գնահատութիւնը:

Միջնագարեան հոգեբանական ուսմունքները նշանաւոր են իւրեանց միակողմանի Աստուածաբանական ուղղութեամբ և այս պատճառաւ չեն կարող ինքնուրոյն համակարգութեան շարքը դասուել: Միջին դարերի վերջերքին, սիւռլաստիֆականութիւնն ընկնելով, զօրանումեն սկեպտիցիզմը (նօմինալիզմ) և միստիցիզմը, կազմելով մուտք դէպի նոր գիտութիւնը:

Թիֆլիս. Գարրիէլ Տէր Գարրիէլեանց.
(Շարտանակելի)

ՀՈԳԻ ԵՒ ՄԱՐՄԻՆ

ՇԱՐԱԳՐԱԲԻՒՆ ԱՂԷՔՍԱՆԵՐԻ ԲԵՆ

ՊՐՕՑԵՍՈՐԻ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԷԲԻՐԴԻՆԵԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Արք գիտնականք և իմաստունք և ներհունք պէս պէս հմտութեանց, երբ կամեցել են ընդդէմ խաւարի տգիտութեան մղել գու պատերազմ, որ քան զաշխարհական ճակատամարտս առա-

ւել ասեղ է և դորուոր, արգարե յաջողել է նոցա՝ այդպիսի աս-
 Տաւոր և ծանր դժուարութեանց ընդգէմն խիզախիլ անվեհերու-
 թեամբ և յաղթական հանդիսանալ. սակայն երբ միշտ ի գործ
 դրած են միմիայն ուսման և գիտութեան հատու սուրն, զէնք և
 գործիք, որով այնուհետեւ բացել են և կրանան այժմ առաջի
 աղգայ և ազանց և գրեթէ ընդհանուր մարդկութեան համար
 հարթ հաւասար, լայն և ընդարձակ ճանապարհ և շաւիղ լուսոյ
 և լուսաւորութեան, գիտութեան և իմաստութեան, Ուստի՝ որք
 անձնանուիրութեամբ և անխոնջ աշխատութեամբ՝ մարդկային
 այդ յառաջագիմութեան և մտաւոր զարգացման ասպարիզին մէջ
 կարի յոյժ վատակեցան և ի բաց հալածեցին տգիտութեան մա-
 ռախոյապատ խաւարն, և իւրեանց աստուածաձիր գիտութեանց
 և հմտագոյն արհեստից երկանց պտուղներով և արմտիքներով
 պատրաստեցին լյեւալ շտեմարանք. որից՝ իւրաքանչիւր ոք կլցու-
 ցանէ իւր մտաւոր զարգացման կարօտութիւնն, իրաւամբ կ'կոչին
 բարերարք աղգայ և բարեկամք մարդկութեան. որոց զէմն՝ միշտ
 և հանապազ խորին երախտազգացութեամբ շնորհասպարտ լինե-
 լու ամենիցս վերայ անժխտելի պարտք կան:

Եթէ անցեալ ժամանակաց մէջ եղել են և ի ներկայիս ևս կան
 ոչ սակաւաթիւ այդպիսի բարերար անձինք, որոնք իւրեանց գրա-
 ւոր ուսումնական երկասիրութիւններով և գիտնական աշխատու-
 թիւներով ականաւորք հանդիսացած և ճանաչուած են ամենայն
 աղգայ մէջ, ուրեմն չէ ինչ անգէպ՝ այլ իրաւունք են, գասել
 կամճառս այնպիսի վեհանուն իմաստնոց և գիտնոց՝ մեծահամբա-
 սոյնն գիտնական Աղէքսանդր Բէն, Գրօֆեսօր Լօգիկայի Երկր-
 գիմեան համալսարանի մեծին Բրիտանիոյ, որն՝ իւր փիլիսոփայա-
 կան, իմաստասիրական և հոգեբանական հմուտ երկասիրութիւ-
 ներովն՝ զարդիս նայնպէս պանծալի և ականաւոր հանդիսացած
 թէ իւր Անգղիական և թէ առհասարակ Եւրոպական լուսաւոր-
 եալ աղգայ մէջ: Սորա այնպիսի ուսումնական գրուածներն բող-
 միցս տպագրեցան և յԱնգղիականէն թարգմանեցաւ յայլ և այ-
 լիզուս և ի Ռուս լեզու (Գալաքեալ 1880 թի Ի Ալեւ.) իսկ ի Ռու-
 սականէն ի հայ աշխարհիկ բարբառ (բայց համեմատ ուսս բը-
 նագրին) թարգմանելով և իմ՝ նորա գեղեցիկ ուսումնական աշ-
 խատութիւնն ընդ վերնագրովս «Հոգի և Մարմին» զոր ասան հա-
 ճութեամբ սրտի կնուիրեմ ուսումնասէր մանկանց սիրելի աղ-

իս որոց համար կարող է ծառայել իբրև օգտակար ձեռնարկ
բասաութեան դպրոցաց մէջ:

Քէպէտե հայերէն աշխարհիկ լեզուի անմշակութիւնն՝ օտար
լեզուէ թարգմանութեան գործոյն մէջ կկաշկանդեն զթարգմա-
նիչն և մեծամեծ դժուարութիւնք կնկատուին ուսումնական բա-
ռից և իմաստից ճիշտ բացատրութեան մէջ, սակայն՝ այդպիսի-
ներն պարզելու և դիւրահասկանալի անելու յատուկ փափագա-
նօք, որքան հնարաւոր էր՝ աշխատեցայ: Ար և յուսամ, թէ այս
իմ՝ դուզնաքեայ աշխատութիւնն կգտնէ արժանիք յարգութեան
ազդիս ուսումնասիրաց առաջին:

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԻԻԹԱՐԵԱՆ:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԵՂԻՆԱԿԻ ԳՐՈՅՍ:

Աղէքսանդր Քէն. ազգաւ Անգղիացի, ծնեալ յամին 1818 յԱրեւրդին
քաղաքի, զաւակ աղքատ ծնողաց որոյ բնածին կորովամիտ ընդունակու-
թիւնքն նկատելի էին անգամ մանկական հասակին մէջ, ուստի աղքատու-
թիւնն և չքաւորութիւնն երբէք չկարողացան արգելք լինել նորա ուսում-
նատենչ բուռն ցանկութեան մտանել իւր ծննդավայր քաղաքի դպրոցն, ուր
և յառաջագիմութեամբ և յաջողութեամբ աւարտելով ուսման ընթացքն՝
ստացաւ ուսուցչի պաշտօն նոյն դպրոցի մէջ, այնուհետև նորա գիտութեան
հռչակն հասնելով շատ տեղեր՝ տուին նորան Գլխագով և Լօնդօնի համալ-
սարանաց մէջ ամբիոն ուսուցչապետի (պրօֆեսորի) բնական փիլիսոփայու-
թեան, տրամաբանութեան և անգղիական գրականութեան: Աւելի հատընտիր
երկասիրութիւնք, Չգացումն և բանականութիւն, Չգացողութիւն և կամք,
Ուսումն բնաւորութեան գանկարանական տեսակետէն Մտաւորական և բա-
րոյական գիտութիւն, Տրամաբանութիւն, Հոգի և Մարմին և նոցա առընչակ-
ցութեանց տեսութիւնք, Հոգեբանութիւն գրեց նմանապէս և այլ զանազան
ուսումնական գրուածքներ հասարակական զարգացման և լեզուի և մատենա-
գրութիւն ուսումնասիրութեան և այլն:

Միով բանիւ, սորա բաղմամբի գրաւոր և արգիւնաշատ ուսումնական եր-
կասիրութիւնքն՝ որքան և նշանաւոր համակրելի ընդունելութիւնք գտին ի
կաճառս վեհանուն գիտնոց և իմաստնոց ազգացն Նւրոպականաց, այնքան և
յընդհանուրս հռչակեցաւ և նշանաւոր հանդիսացաւ յարգելի անուն մեծա-
համբաւ առնս գիտնականի և իմաստնոյ Աղէքսանդրի Քէն, Արղեօք քան
զայս առաւել ի՞նչ հաճոյական զմայլմունք և հոգեկան մխիթարութիւն կա-
րողէին պատճառել բաղմարդին ծերունի գիտնականին, երբ տակաւին ի
կենդանութեան կտեսնէ ներկայօրէն, թէ՛ չեն ի զուր և ապարդիւն անցել
յօգուտ մարդկային զարգացման իւր այնչափ թափած քրտունքն, մտաւոր

մշակութեան սերմունքն, որք զարդիս յուռթի կկացուցանեն մտաւոր շատ անդաստաներ. ապա ուրեմն և զկնի մ'ահուանն՝ կանմահանայ նա յաւերժաբար առաջի մարդկային ազգի առաւել ևս արժանավայելն յարգանօք և մեծարանօք:

ՅԱՆԿ ԳԼԽՈՅ.

- Ա. Դասակարգութիւն հարցմանց:
 Բ. Կապակցութիւն հոգւոյ և մարմնոյ:
 Գ. Հասկացողութիւն հոգւոյ և մարմնոյ կապակցութեան մասին իբրև զուգընթաց երևութից:
 Դ. Ընդհանուր օրէնք առընչակցութեան հոգւոյ և մարմնոյ:
 Ե. Բանականութիւն:
 Զ. Ի՞նչպէս միաւորած են մարմին և հոգին:
 Է. Պատմական նկարագիր հարցմանց հոգւոյ մասին:

ՀՈՒԻ ԵՒ ՄԱՐՄԻՆ՝

ԳԼՈՒԹ Ա.

ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ ՀԱՐՑՄԱՆՑ.

Շատերն ո՛չ առանց հեգնութեան կհարցանեն՝ թէ՛ որպիսի կապակցութիւն կարող է լինել ուղեղի սպիտակ և գորշագոյն նիւթականութեան և հոգւոյ մէջ: Կարելի՞ է արդեօք գիտել որպիսի և իցէ փաստ կամ օրէնք, որք կվերաբերին մարդկային հոգ-ոյն, ջղային (նեւրոյն) վանդակների (բլեղ) և ջղային նրբաթելերի ուսման միջնորդութեամբն:

Սոյն հարցումն՝ որպիսի դիտաւորութեամբ և առաջարկեն, շատ կարևոր է և բազմանշանական: Հնարաւոր պատասխանիքն հետեւեալք են:

Նախ՝ ճանաչելով և խոստովանելով, որ հոգին և մարմինն ներկայ կենաց մէջ անբաժան են միմեանցից, բայց և այնպէս կարելի է ենթադրել, որ իւրաքանչիւրն նոցանից կատարելապէս ինքնուրոյն է, և չունին բնաւին փոփոխակի ազդեցութիւն միմեանց վերայ. ապաուրեմն հարկ է ուսումնասիրել առանձինն և զանազան հնարաւոր եղանակաւ:

Նայելով այդպիսի ենթադրութեան՝ ուսումն ուղեղի կարելի է լինել հետաքրքրական բնախօսութեան, գործադրական բժշկականութեան և վիրաբուժութեան համար: Բայց կլինէր ըստ ամենայնի անզանազան հոգեբանի համար:

Թէպէտ և այդպիսի ենթադրութիւնն՝ ըստ իւր ներքին էութեան չունի իւր մէջ ո՛չ ինչ անհաւանական և անհաւատալի բան, սակայն հաղիւ թէ կը համաձայնի սովորական կարգի իրաց: Մեք չունիմք ո՛չ մի օրինակ, որ երկու

իրեր միմեանց հետ այնքան սերտ և անձուկ միաւորած լինին, ինչպէս հոգին և մարմին, առանց փոխադարձ ազդեցութեան և յարմարեցուցման: Այսու ամենայնիւ միաւորութիւնն մեր ես—ի հոգւոր և մարմնաւոր մասանց է չափազանց ինքնատեսական, որպէս զի չասեմք իւր տեսակին մէջ միակ դիպուած և մեր չունիմք իրաւունք փութով արտայայտել մեր սեպհական դատողութիւններն նոցա առընչակցութեանց մասին:

Երկրորդ՝ կարելի է որ քանի մի հոգեկան պաշտօններն կամ գործողութիւն (ФУНКЦИЯ) մասամբ կախին նիւթական կազմակերպութիւնից, սակայն իբրև գերագոյն գործողութիւնք կատարելապէս հոգեկան յատկանիշ բնաւորութեան, չկախին ամենեին բնական պայմաններից: Զօրօրինակ, տպաւորութիւն ընդունելոյ համար մեք կը կարօտիմք արտաքին գործարանների զգացմանց, յայնպիսի դէպս՝ մեք կախումն ունիմք կազմակերպութիւնից և գործողութիւնից աչաց, ականջաց, գործարանաց շոշափելեաց և այլն, բայց առաւել նուրբ գործողութիւններն (ПРОЦЕССЫ) անուանեալքն յիշողականութիւն, բանականութիւն, երևակայութիւն կարեն լինել կատարելապէս հոգւոր, օտարացեալ միանգամայն բոլոր նիւթական գործողութիւնից և բարձրր են քան զայնս: Եւ յայդպիսի դէպս, հոգեբանին ո՛չ ինչ արդելք չէր լինիլ ծանօթանալ զգացմանց գործարանների մեքենայական կազմակերպութեան հետ, բայց հեռի գնալն կլինէր նորա նպատակի համար անօգուտ:

Երրորդ՝ կարելի է, որ կիրականայ հոգւոյ և մարմնոյ մէջ լիովին ներքին կապակցութիւն և կախումն, որ իւրաքանչիւր հոգեկան գործողութիւն ունի համապատասխան նմին մարմնական փոփոխութիւն, բայց և այնպէս երկու գործողութիւններն այնքան զանազան են և տարբեր, որ չկարեն սփոել լոյս միմեանց վերայ: Անկարելի է կազմակերպել ո՛չ ինչ ընդհանուր օրէնք, ո՛չ միոյն և ո՛չ միւսոյ համար, կամ գէթ այդ օրէնքներն այնքան այլասեռ են իւրաքանչիւրոյ համար, որ նոցա համեմատելն անհնարաւոր է: Մեք կը գտնեմք զօ, որ յայտնի բաւականութիւնն և յայտնի ջղային յորձանքներն (ТОКЪ) կճադին միաժամանակ, Բայց այդ զուգադիպութիւն՝ մեք կենթադրեմք, որ ո՛չ ինչ չնշանակէ և ո՛չ ինչ չբացատրէ: Արելի է դուրս բերել յայտնի մի եզրակացութիւն կապելով բաւականութիւնը ճաշկերութեան, երգոց, նուագարանաց ներդաշնակութեանց և տօնախմբութեանց հետ: Բայց տեղեկութիւններն ջղային յորձանաց մասին չեն տալ ո՛չ ինչ գործնական բացատրութիւն և և ո՛չ կընդարձակեն մեր ծանօթութիւններն բաւականութեան օրինաց մասին:

Չորրորդ՝ սկզբունքով հնարաւոր համարելով հասանել միջնորդութեամբ կատարեալ ուսումնասիրութեան ուղեղի ճանաչողութեան հոգւոյ, կարելի է ժխտ'լ, թէ տեղեկութիւններն՝ որն ունի գիտութիւնն այժմ կամ թէ կյուսոյ ձեռք բերել ի մօտաւոր ապագայս լինէին որքան և իցէ օգտակարք այդ իսկ նպատակի համար: Այնպէս որ՝ միջամտութիւնն բնախօսութեան իւր ներկայ դրութեան մէջ անօգուտ է և անզօր:

Հինգերորդ՝ կարող են ունենալ այսպիսի կարծիք որ մեր գիտութիւնն

Հոգևոր գործողութեանց բաւականաչափ կատարելագործեցաւ շնորհիւ ուսման նիւթական գործողութեանց և ըստ չափու մեր շարունակութեան, այլ ուսումն հետզհետէ պիտի կատարելագործուի:

Ո՞րն այդ ենթադրութիւնից ճշմարիտ է, այդ կարելի է վճռահատել զկնի վերահայեցողութեան ժամանակակից դրութեան խնդրոյն: Այդպիսի ինքնատեսակ և դժուարին առարկաների մասին միակ ենթադրութիւնն, որ կարելի է թոյլատրել ի սկզբան. այդ այն է, որ այդ երկու տարբեր բնութիւններն գտնուելով իւրեանց իսկական ներկայ միութեանց մէջ՝ չեն կարող լինել անկախ միմեանցից, որ նոցա մէջ կայ և կիրականայ եղանակ փոխագործողութեան և զի գործողութիւններն կատարուելով միոյն մէջ՝ պէտք է համարել իբրև բանալի միւսոյ գործողութեան:

Ինչ կարող են առարկել, որ հարցման ձևն՝ որում իբրև պատասխանիք են սոյն նկատողութիւններն, իսկապէս հստորական է և ո՛չ բոլորովին ուղիղ: Եթէ ուղեղն լինէր միակ նիւթականութիւն որում կարելի էր վերագրել Հոգևոր գործողութիւնն, ուրեմն իսկապէս կատարեալ ճանաչողութիւն այդ գործարանի՝ որն մեք ունիմք, սակաւ ինչ կօժանդակէր մեզ կազմակերպել օրէնք միաւորութեան հոգւոյ և մարմնոյ: Բայց այդ չէ՛ այդպէս: Ամբողջ մարմինն թէև առ զանազան աստիճանս, անձուկ կապուած է հոգւոյ գործողութեանց հետ: Սահմանափակել մեր գիտութիւնն միմիայն ջղային նիւթականութեամբ, կնշանակէ բաւականին խեղաթիւրել այդ միաւորութիւն, անգամ նոյն իսկ կատարեալ գիտութիւն այդ նիւթականութեան կլինէր անկարող վճռել սոյն խնդիրն: Երբ մեք կտեսնեմք մանուկն, որ կտրել է իւր մատն, իսկոյն կերևակայեմք միզ այն՝ ինչ որ կզգայ նա, տեսնելով մարդոյ արտաքին ժպիտներն՝ մեք կհասկանամք նորա հոգեկան տրամադրութիւն: Աթուէր թէ՛ մեք տակաւին շատ հեռի եմք գիտութիւնից այնքան նուրբ և բազմաբարդ գործարանի, ինչպէս է ուղեղն: Եթէ մեք բաւականամբ զկնի մահուան անդամահատութեամբ՝ հաւանական էր որ կհասնէինք բոլորովին թոյլ յառաջագիմութեանց: Բայց կայ այլ ճանապարհ: Մեք կարեմք սկսել առաջնակարգէն, այսինքն գործարանից զգացման և շարժման, որոց հետ կապուած է ջղային համակարգութիւն. մեք կարեմք ուսանել նոցա գործողութիւն կենդանութեան ժամանակն, և նոցա ներքին կազմակերպութիւնն: Մեք կարեմք փորձառականապէս փոփոխել նոցա գործողութեանց դասաւորութիւն. մեք կարեմք որոշել թէ՛ նոքա ի՞նչպէս կազդեն ուղեղի վերայ և ի՞նչպէս ուղեղն փոխադարձաբար կազդէ նոցա վերայ: Ունելով մեզ այդ ամենայն տեղեկութիւններն իբրև բանալի, մեք գուցէ կարող կլինիմք բացատրել գաղտնիքներն անդամազննական կազմութեան մարմնոյ (Анатомического строения) և ստիպել ջղային վանդակներն և ջղային նրբութիւններն բանալ իւրեանց բուն նշանակութիւնն և իմաստն:

ԳԼՈՒԽ Բ.

ԿՍՊԱԿՅՈՒԹԻՒՆ ՀՈԳԻՈՅ ԵՒ ՄԱՐՄՆՈՅ:

Փաստերն՝ որք կցուցանեն թէ՛ հոգւոյ և մարմնոյ մէջ եղած կապակցութիւն չէ պատահական և մասնաւոր երևոյթ, այլ կարող է լիովին յարակալական լինել. հետեւեալներն են:

Նախ ամենայն ժամանակ և աշխարհիս ամենայն կողմերն նկատուած է, զգացմունքներն ունին բնական լեզու կամ արտաբերութիւն: Երևոյթներն՝ որք կնկարագրեն տարբեր ձևն յուզմանց. այնպէս մշտական են, որ մեք կնկատեմք նոցա վերայ իբրև թէ՛ յուզմանց նոյն իսկ մասանց վերայ: Ուրախութեան ժպիտներն, յաւէտ ծամածռելն դիմաց, անակնթարթ հայեցուածն ավիշութեան, սարսուճն երկիւղի, եղանակ և նազելի հայեացք, խոժոռումն բարկութեան, կգտանեն ըստ երևութին անբաժան միաւորութեան մէջ այն հոգեկան դրութեանց հետ, որոց նոքա կակնարկեն: Եթէ զգացումն կծագի առանց իւր յատկական արտայայտութեան, մեք կվերագրեմք այս արտայայտութեան բացակայութեան կամ ինքնակամ նորա ճնշման կամ թուլութեան գրգռման, որն ունենալու է որոշ աստիճան ձգտման նորա համար, որպէս զի ազդէ մարմնական գործարանաց վերայ*):

Այդ միատեսակ միաւորութիւնից՝ որ կայ զգացմանց և նոցա արտայայտութեանց մէջ, կըկախի մեր մերձաւորների բնաւորութեան և տրամադրութեան մեր ճանաչողութիւնը: Երբ մին ուրախ է կամ վշտացած, սիրահարուած կամ զայրացած և եթէ նա կանխաւ մտադիր է այդ չճածկել, ուրեմն մեք այդ կնկատեմք և մինչ անգամ կարող եմք դատել աստիճանն ուժգնութեան զգացման:

Ըստ բազմադիմի պատճառաց մեք չափազանց կհետաքրքրիմք յուզմունքների արտաքին յայտնութիւններովն: Անշունչ տեսարանն բնութեան ս'չ այնքան կգրաւէ մեր ուշադրութիւն, ինչպէս արտաքին տեսիլն մեր մերձաւորների: Անշունչ առարկաներն ունին առանձին շահեր, երբ երևակայու-

(*) Սորան կվերաբերին հետեւեալ նկատողութիւններն Գարվինի. «Մեծ մասն մեր յուզմանց (նա կարող էր տեսլ «ամէնն») այնպէս անձուկ կապուած են նոցա արտայայտութեանց հետ, որ մարմնոյ կրաւորական կացութեան ժամանակն, հոքա հազիւ թէ կարող են լինել, ըստ այնմ՝ մարդս կարող է դիտել, որ իւր կեանքն մեծ վտանգի մէջ է խիստ կցանկայ փրկել նորան, բայց եւ այնպէս Լուդովիկ XVI շրջապատուած լինելով կատաղի ամբոխիւն՝ ասաց «Միթէ ես կվախենամ, փորձեցէք շնչերակն բազկիս» Այսպէս մարդս կարող է ունել խիստ ատելութիւն առ այլս, բայց մինչդեռ զգացումն չէ ստացել մարմնական արտայայտութիւն, չէ կարելի ասել, որ նա կատաղութեան մէջ է: (Expression p 239) նմանապէս Գօկտօր Մաուրելի կնկատէ թէ՛ «Առանձնամասն շարժումն մկանանց չէ թէ միայն արտայայտող է յուզմանց, բայց է նորա էական մասն, եթէ այն միջոցին՝ երբ մեր դիմաց գծագրութիւնն կարտայայտէ միակ յուզումն, մեք փորձեմք մեր հոգւոյ վերայ այլ տրամադրութիւն, կհամոզիմք որ այդ անկարելի է:

Թիւն (фантазия) կտայ և կաւելացնէ նոցա մարդկային զգացմունքներ: Արեգակն և լուսին, հողմ և գետք սակաւ գրաւիչք են, երբ կը քննուին իբրև իսկապէս բնական ոյժք, քան թէ երբ մեք կվերագրեմք նոցա մարդկային միտք և պատճառք, մտերմութիւն և ատելութիւն:

Շահ ինչ դէպի մարդկային անձնաւորութիւն, դէպի նորա արտաքին երևոյթներն, որք են կանխանշանք հոգեկան գործողութեանց ի գործ կը գրուի գեղարհեստներովն լուսաւորեալ ազգաց, և առաւել ևս կբարձրանայ նոցանով: Նկարչի, քանդակագործի, բանաստեղծի համար իւրաքանչիւր զգացումն ունի իւր սեպհական արտայայտութիւն: Ո՛չ միայն առաւել կոշտ զգացումներն կապուած են նիւթական երևոյթից հետ, այլ և ճարտար արհեստագիտի կամ դերասանի համար մարդկային հոգւոյ գերագոյն ամենաաղնիւ և սրբազան յօղմունքներն ունին իւրեանցից անբաժան մարմնական գրութիւն (поза) և արտայայտութիւնն: Նա մանաւանդ միջին դարուց գեղարուեստական գործերի մէջ իսկական Աստուածային ստորոգելիք (Атрибутъ) անմարմին հոգւոց՝ կգտանէին իւրեանց մարմնական արտայայտութիւն: Բնութիւնն նահատակաց, սրբոց, աստուածամօրն, նոյն և Փրկչին գտաւ իրեն արտայայտութիւն նոցա մահուան համապատասխանող շարժմանց մէջ: Միահասան վկայութեամբ ընդհանուր մարդկութեան մեր բոլոր զգացմունքներն և յուղմունքներն չունին ինքնուրոյն էականութիւն և յամենայն դէպս կմարմնանան մեր անձի մէջ:

Այդ սուր և ակնյայտնի փաստն ստէպ կղանցառնեմք հոգւոյ անմարմնականութեան զանազանակերպ քննադատութեանց ժամանակն: Արքան և սովորաբար նա պարզ է մարդկան համար, որքան ուշադրութեամբ և հետազօտեցին նորան նկարիչներն, քանդակագործներն և բանաստեղծներն, սակայն բնազանցներն և աստուածաբաններն կարհամարհեն զայն երբ կհաստատէին սահման հոգւոյ և մարմնոյ:

Երկրորդ՝ խումբն ապացուցութեան հոգւոյ և մարմնոյ անձուկ կապակցութեանց մասին կպարզեն մեզ թէ՛ հոգին և մարմին ունին և կանեն փոխագործողութիւն և փոփոխութիւն միմեանց գրութեանց վերայ:

Այդ խմբի փաստերի և ապացոյցների շատութիւնն կգժուարացնէ նորա մեկնութիւն: Ես կսկսեմ սակաւ ինչ սովորական ընդունուած օրինակներից և ապա կդառնամ դէպի ընդարձակ ընդհանրացուցումն առ որս ընթացան բնախօսներն:

Ինչ որ կվերաբերի այն բանին թէ՛ մարմնոյ գրութիւն ինչ ազդեցութիւն ունի հոգեկան գրութեան վերայ, այդ մասին ունիմք այսպիսի փաստեր զօմեր զգացմանց և տրամագրութեան կախումն ունենալն քաղցածութիւնից, յագեցութիւնից, ստամոքսի գրութիւնից, հոգնածութիւնից և հանգստութիւնից, մաքուր և անմաքուր օդից, ջերմութիւնից և ցրտութիւնից, գեղօրէից և գրգռեցուցիչ միջոցներից, բնական պակասութիւնից, քնից, զառամելութիւնից և այլն:

Այդ ազդեցութիւններն կտարածին ո՛չ միայն բիրտ տեսակ զգացողու-

Թեանց վերայ կամ այնպիսի սովորական երևութից վերայ, զօ. զկնի ճաշու ասորժանք գրուցատրութեան, այլև հոգւոյ գերագոյն շարժման վերայ կտարածին, սէր, զայրոյթ ամենավերին աստիճանի գեղեցիկ զգացմունք, բարոյական դիւրազգացողութիւնք: « Առողջութիւնն կարգելու աստուածութեան (АТӨНСТЪ) աղջամուղջ խաւարին մէջ »: Մարմնական տառապակրութիւնն բազմիցս կլինի պատճառ արմատական փոփոխութեան բարոյական բնաւորութեան: Մեր առօրեայ բնական կեանքն կգնայ զուգընթաց հոգւորին: Առողջ մարդն կարթնանայ առաւօտուն մեծամեծ պատրաստութեամբ հոգւոր ուժոյ և եռանդեան: Առաջին կերակուր ընդունելովն կամրապնդէ և կզօրացնէ այդպիսի գրութիւնն:

Մտաւորական ոյժերն և տպաւորութիւններն կգտնուին այն ժամանակ գերակայութեան մէջ: Եւ ինչ չափով որ երբ կերակուրն կսկսի սպառել գործարանաց մէջ, նովին չափով մտաւորական ոյժերն և տպաւորութիւնքն փոքր առ փոքր կընկնեն, սակայն կարող են վերստին կազդուրիլ առ ժամանակ մի գազարելով աշխատութիւնից, աւուր վերջն կժամանէ խոնջութիւն, որ խորին թմրութեամբ կքնացնէ առողջ քնով:

Որովհետև մտաւորական ընդունակութիւններ ինչպէս կթուին՝ ևս առանել ազատ են բնական զօրութեանց ազդեցութիւններից, ուրեմն ես յառաջ կբերեմ քանի մի փաստեր, որք կցուցանեն թէ արդարև չունին բացառութիւն ընդհանուր կանոններից: Յիշողականութիւն կզօրանայ և կթուլանայ, ըստ գրութեան մարմնոյ, կպայծառանայ կայտառութեան առոյգութեան միջոցին և կնսեմանայ խոնջութեան և նուազութեան ժամանակն: Պարոն Գենրի Գօլանդն կպատմէ թէ՛ միանգամ միւսնոյն աւուր մէջ եղել է երկու խորագոյն հանքատեղեաց մէջը Գարցումը, իւրաքանչիւրոյ մէջ մնալով քանի մի ժամեր: Երկրորդ՝ հանքատեղւոյ մէջ այնքան նուազել էր խոնջութիւնով և քաղցածութիւնով, որ նա իւր յիշողութիւն իսպառ կորուսել էր, նա չկարողացաւ մտաբերել անգամ մի բառ գերմանական լեզուի: Այդ ընդունակութիւն առ ինքն վերադարձուցաւ կերակուր ուտելուց և գինի խմելուց յետոյ, ծերութիւն՝ ինչպէս յայտնի է 100-ից 99 մարդի յիշողութիւն կթուլացնէ:

Տենդի ժամանակն երբեմն լսողութիւն կլինի չափազանց սուր, ուղեղի խանգարման կանխագուշակելի նշանաբաններից մին ևս կհամարի աչաց չափազանց սրատեսութիւն, բժիշկն կհասկանայ այն ժամանակ, երբ որ արդէն հաւաքուել է արիւնն, որոց հետեւիլ կարող է և արտաղեղումն արեան:

Իւրաքանչիւր ոք, որ կըկարծէ թէ՛ մտածողութիւն չունի կախումն մարմնական գործարաններից, պէտք էր մտաբերել հետեւեալ փաստն: Եթէ ընթանալու կամ այլ մարմնական աշխատութեանց և զբաղմանց ժամանակն, հետաքրքիր միտք կյղացուի մեր մէջն կամ կհաղորդէ մեզ այլ անձն, մեք յանկարծ կգազարիմք և կմնամք այնպէս հանգիստ քանի որ չէ՛ գազարել յուղմունքն, նմանապէս մեր մտքերն կարտազրեն սովորաբար յայտնի գրութիւններն և շարժմունքներ մարմնոյ, ինչպէս որ դերասա-

նինը նորա մտքի արտաքին յայտնութիւնք են, և եթէ որ և իցէ մի բան կիսանգարէ այդ բնական երևոյթներն, ուրեմն մտածողութեանց ընթացքն կարգելուին կամ կփոփոխուին: Ընդէր քունն կրկարձէր ամենայն մտածողութիւն բացի անկապ երազներից (որք չեն կարող լինել խորին քնոյ ժամանակն) եթէ յայտնի դրութիւնն մարմնական ուժոց կարևոր չլինէր մտաւոր գործողութեանց համար:

Մեծ նշանակութիւն կտային քանի մի կարծեցեալ բացառութեանց այդ ընդհանուր կանոնից: Մարմնական թուլութեան, ժուժկալութեան, խոնջութեան, տկարութեան և ծերութեան ժամանակներին քանի մի անհատականներն կցուցանեն գերադոյն հոգևոր եռանդն և մտաւորական մեծ ոյժերն: Անսագրութիւն և վարքն նահատակաց և հերոսաց լի են օրինակներով այդպիսի բացառութեանց: Եթէ դոցանից եզրակացնեմք, որ հոգին թէև ունի բաւականաչափ կախումն մարմնուց, բայց և այնպէս մինչ ցոյսն աւտիճան անկախ է, ուրեմն կարելի է հարցանել թէ՛ ընդէր այդ երևոյթն կնկատուի կամ կպահպանուի միմիայն սակաւ դէպս: Այդպիսի միակողմնակի և ինքնակամ ենթադրութիւն կյիշեցնէ կարծիքն Պլատոնի, թէ անմահութիւն է բաժին միայն և եթ փիլիսոփայից: Այսու ամենայնիւ հոգևոր և մարմնոյ յարաբերութիւններն լիակատար կերպիւ նկարագրելու ժամանակ կարևոր է առնուլ ի կշռադատութիւն այդ իսկ ակնհայտ բացառութիւններն և մեք կվերադառնամք առ նոսա անազան ուրեմն:

Ազդեցութիւն հոգևոր գործողութեանց՝ մարմնոյ վերայ, կապացուցուողն նոյնքան ևս համոզողական վկայութեամբք: Յանկարծապէս ծագած յուզմունքներն կիսանգարեն մարմնական գործողութիւններն:

Երկիւղն կընդարմացնէ մարտողութիւնն: Չափազանց վաստակաբեկութիւն հոգևոյ կթուլացնէ բոլոր գործարաններն: Երկարատե և ծանր մտաւոր աշխատութիւնն կպատճառէ մարմնոյն վնաս: Իսկ բարեբաստիկ կեանքն բարեպատեհ է առողջութեան և երկարատեութեան համար:

Դիմառնութեանց ժամանակներն՝ որք այնքան սովորական էին մեր հիշմանաստեղծութեանց մէջ, զանազանակերպ կիրք և ցանկութիւնք կնկարարուէին այն նշաներով, որպիսիքն կրից երկարատե տիրապետութիւն կթողուին մարդկոյին մարմնոյ վերայ: Սեկվելլի *Ինդուկցիան* (Induction) գրքի մէջ, Երկիւղն կնկարագրի հետեւեալ կերպիւ:

Next saw we Dread all trembling, how he shook
With foot uncertain proffer here and there
Renumb'd of speech, and, with a ghastli look
Search'd every place, all pale and dead for fear.

Այնուհետև մեք տեսած եմք դողացնող և ցնցուող ծերունի, որ անուղիքայլերով կերերար աստ և անդ, զրկուած խօսակցութիւնից և անմիտ հաշիւացքով կորոնէր իւր համար տեղ, բոլորովին դալկացած և կիսամեռ զարհուրանքից, Իսկ դժբախտութիւն:

His face was lean, and some deal pinèd away
And ake his hands consumed the bone.

Նորա դէմքը նիհարել է և աղօսացել է կնճիռներով, իսկ ձեռաց վերջնացել է միայն կաշի և ոսկր:

(Թարգմ.)